

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Simsom-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Անվտանգության ռենտգեն զննման սարք սայլակների և ուղեբեռերի համար	Անվտանգության ռենտգեն զննման սարք սայլակների և ուղեբեռերի համար	Անվտանգության ռենտգեն զննման սարք՝ սայլակների և ուղեբեռերի համար 1. Ընդհանուր պահանջներ 1) Ռենտգեն սարքը պետք է աշխատի կրկնակի էներգիայի ռենտգեն պատկերման տեխնոլոգիայով և ունենա կյուրերի դասակարգման գործառույթներ, որոնք տարբեր գույներով նույնականացնում են օրգանական, անօրգանական խառնուրդները: 2) Սարքը պետք է ունենա կրկնակի դիտման ռենտգեն պատկերման համակարգ և արտաբերի ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց պատկերներ երկու անկախ ռենտգեն գեներատորներով և դետեկտորներով: 3) Սարքը պետք է նախատեսված լինի սկանավորվող իրերի մեջ հայտնաբերելու թաքցված զենք, պայթուցիկ կյուրեր, բջջային հեռախոս, մետաղական իրեր, հեղուկ, թմրամիջոց, դեղահաբ, փոշենման զանգված և այլն: 4) Սարքը պետք է աշխատի 220VAC - 240VAC, 50Hz/60Hz էլեկտրասնուցմամբ: 5) Սարքի առավելագույն բարձրությունը պետք է լինի 2800մմ, առավելագույն լայնքը՝ 2500մմ, առավելագույն երկարությունը՝ 7000մմ: 6) Սարքավորման թունելի բացվածքը պետք է լինի այնպիսին, որ

դրանում հնարավոր լինի սկանավորել առավելագույնը 1000մմ լայնությամբ, 1500մմ բարձրությամբ և 1200մմ երկարությամբ իրեր: 7) Սարքը թունելի ներսում պետք է ունենա շարժական կոնվեյեր` իրերը (օրինակ` անվասայլակը) թունելի ներսում առանց ֆիզիկական միջամտության կոնվեյերով տեղաշարժելու համար: 8) Կոնվեյերի մակերեսը պետք է լինի այնպիսին, որ կոնվեյերի աշխատանքի (պտտվելու) ընթացքում դրա վրա գտնվող իրերը (օրինակ` անվասայլակը) կոնվեյերի մակերեսից չտեղաշարժվի: 9) Սարքը պետք է ունենա թեքահարթակ` անվասայլակն առանց հատակից բարձրացնելու (կտրելու) անիվների օգնությամբ բարձրանա կոնվեյերի վրա: 10) Կոնվեյերի առավելագույն ծանրաբեռնվածությունը պետք է լինի 300 կիլոգրամից ոչ պակաս: 11) Կոնվեյերի` դեպի թունել մուտքի և ելքի երկարությունը պետք է լինի առնվազն 800 մմ: 2. Հիմնական պահանջներ 2.1 Ռենտգեն գեներատորներ 1) Գեներատորները պետք է տեղակայված լինեն թունելի վերևում և կողային հատվածում, ռենտգեն ճառագայթները համապատասխանաբար դեպի վերևից ներքև և դեպի կողք: 2) Ռենտգենյան խողովակների հովացման համակարգը պետք է լինի ավտոմատ: 2.2 Պատկերի մշակում 1) Սարքը պետք է ունենա պատկերի մշակման ավտոմատացված այնպիսի համակարգ, որ ունակ լինի ինքնաբերաբար հայտնաբերելու և ընդգծելու սկանավորվող իրերի մեջ թաքցված գեներ, պայթուցիկ նյութեր, բջջային հեռախոս, մետաղական իրեր, հեղուկ, թմրամիջոց, դեղահաբ, փոշենման զանգված և այլն: 2) Պատկերների աստիճանական և խոշորացման գործառույթները պետք է ունենան առնվազն 64 անգամ պատկերի խոշորացման հնարավորություն: 3) Սարքավորումը պետք է նշի և զգուշացնի պատկերների վրա բարձր խտության շրջանները: 4) Պողպատի ներթափանցելիությունը պետք է լինի 50 մմ-ից ոչ պակաս: 2.3 Ուղեբեռի հաշվիչ 1) Սարքը պետք է ունենա ընդհանուր հաշվիչ` զննված ուղեբեռի ընդհանուր թիվն ըստ հերթականության ավտոմատ գրանցելու համար` առանց հաշվիչի մեխանիկական զրոյացման հնարավորության: 2.4

Պատկերների արխիվի կառավարում 1) Սարքավորումը պետք է կարողանա ավտոմատ պահել բոլոր ցուցադրվող պատկերները՝ առնվազն 100.000 պատկեր, իսկ ավտոմատ պահված պատկերները չպետք է ջնջվեն մեխանիկորեն: Պահպանման առավելագույն քանակը լրանալուց հետո միայն ավտոմատացված կերպով պետք է ջնջվեն առավելագույնս վաղ կատարված պատկերները: 2) Պատկերները պետք է պահպանվեն սկանավորման ամսաթվի, ժամանակի և օգտագործողի ID տվյալների հետ միասին: 3) Պահպանման համակարգը պետք է ունենա պատկերներն ըստ ամսաթվի, ժամի և օգտագործողի ID տվյալների որոնման հնարավորություն: 4) Ռենտգենյան պատկերները պետք է կարողանան փոխակերպվել ընդհանուր պատկերի ձևաչափի, ինչպիսիք են BMP, JPG, PNG և այլն: 5) Ռենտգենյան պատկերները պետք է կարողանան արտահանվել դեպի USB ինտերֆեյսի պահպանման սարքեր: 2.5

Օգտագործողի կառավարում 1) Բոլոր օգտատերերը պետք է խմբավորվեն որպես օպերատորներ, ադմինիստրատորներ և սպասարկողներ: 2) Համակարգը պետք է պաշտպանված լինի չլիազորված օգտատերերի մուտքից՝ օգտատիրոջ մուտքանամ և գաղտնաբառի ստուգման միջոցով: 3) Բոլոր օգտատերերի կողմից համակարգ մուտք ու ելք գործելու ժամանակը, կատարված գործողությունները պետք է գրանցվեն և պահպանվեն համակարգում, իսկ դրա վերաբերյալ հաշվետվությունը պետք է հնարավոր լինի արտահանել դեպի USB ինտերֆեյսի պահպանման սարքեր: 2.6

Ճառագայթային անվտանգություն 1) Ռենտգենյան արտահոսքը սարքի կորպուսից 10սմ հեռավորության վրա պետք է պակաս լինի 1 գրեյ/ժամից (1μGy/h): 2) Սարքի առողջապահական անվտանգությունը պետք է համապատասխանի միջազգային բոլոր ստանդարտներին: 2.7 Ախտորոշիչ հնարավորություններ 1) Ռենտգեն սարքի աշխատանքային կարգավիճակը պետք է վերահսկվի գրաֆիկական ինտերֆեյսի միջոցով և դրա, դրա առանձին մասերի անևորմալ աշխատանքի կամ խափանման դեպքում ահազանգի մասին տեղեկատվությունը ցուցադրվի էկրանին՝ նշելով

անսարքության աղբյուրը: 2.8 Գրանցամատյան 1) Սարքավորման ծրագրային ապահովումը պետք է ունենա էլեկտրոնային, ավտոմատացված գրանցամատյան, որտեղ պետք է գրանցվեն սարքի աշխատանքային արդյունքները, այդ թվում՝ սույն հավելվածի 2.3, 2.4 և 2.5 կետերում նշված տվյալները: 2) Ծրագրային ապահովումը պետք է ունենա գրանցամատյանում հավաքված տվյալներն ըստ օրերի, շաբաթների, ամիսների և տարիների վերլուծելու և այդ տվյալները դեպի USB ինտերֆեյսի պահպանման սարքեր արտահանելու հնարավորություն: 3) Սարքը և դրա ծրագրային ապահովումը պետք է ունանան թվայնացման ցանցին (համակարգին) միանալու հնարավորություն՝ դրանում պահպանվող տվյալները, այդ թվում՝ 2.3, 2.4, 2.5 և 2.8 կետերում նշված տվյալները թվայնացման ցանցի սերվեր արտահանելու և դրանում պահպանելու համար: Վերը նշված ռենտգեն սարքը պետք է լինեն նոր՝ վերջին սերնդի գործարանային արտադրության: Լրացուցիչ պայմաններ՝ Երաշխիքային ժամկետն առնվազն երկու տարի: Երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում՝ տեխնիկական սպասարկումը և բոլոր տեսակի վերանորոգումները՝ ներառյալ պահեստամասերն, իրականացվում են մատակարար կազմակերպության կողմից անվճար: Տեխնիկական սպասարկման ապահովումը պետք է իրականացվի սարքի արտադրողի պաշտոնական ավտորիզացված սպասարկման կենտրոնում և/կամ սերտեֆիկացված մասնագետների կողմից: Մատակարարման հասցեով սարքի բեռնումը, տեղափոխումը և բեռնաթափումը կատարվում է մատակարար կազմակերպության միջոցների հաշվին: Մոնտաժային աշխատանքները, տեղադրումը և փորձարկումը կատարվում է մատակարար կազմակերպության միջոցների հաշվին, պատվիրատուի կողմից նախապես տրամադրված տեղում: Տեղադրումից և փորձարկումից հետո մատակարար կազմակերպության միջոցների հաշվին պետք է իրականացվի սարքի հետ ամբողջական աշխատելու ուսուցում՝ առնվազն վեց օպերատորի, երկու ադմինիստրատորի և երկու սպասարկողի համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Simsom в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ԹԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
1			